№ 4. Կիրակի, ապրիլի 3—1866. № 4.

ՎԱՃԱՌԱԿԱՆ

թիֆլիսի առևտրական գազեթ:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յունվարը քաղաքումը՝ 2 ման. 50 կոպ., դուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվել կարելի է խմբագրի մօտ:
Գազեթումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութենի կարգադրութիւնները՝ Թիֆլիսումը նոր քաղաքական կառավարութիւն սարքելու համար արած կարգադրութիւնը, Թիֆլիսի փոշտի արած կարգադրութիւնը, Ռուսաց ժառանգի ուղևած պարգևու․ տօրգերը, յայտարարութիւնները: 1867 թւին Պարիժի համաշխարհական աշխարհահանդէսը: Խոլերայի մասին: Առևտրական տեղեկութիւններ: Մասնաւոր յայտարարութիւններ: Խմբագրութենի կողմից:

ՏԷՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Թիֆլիսի քաղաքական կառավարութիւնը նոր փոփոխութենի տակը գցելու համար, Կովկասի փոխարքայ Նորին ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆԸ հրամայեց ժողովել էս գործի համար տեղեկութիւններ: Էդ տեղեկութիւնների ժողովելու համար Թիֆլիսի քաղաքական Գաւառապետի (Գուբերնատորի) նախագահութենի տակը սարքված է առանձին կոմիսիայ:

Էս կոմիսիան 4 առանձին կոմիտետ է սարքել Թիֆլիսումը էս գործի համար, որոնք պէտք է իմանան Թիֆլիսումը բնակողների թիւը և նրանց կայքի մասին:

1.) Քաղաքումը անշարժ կայք ունեցող կամ առուտուրով պարապող ժառանգական ազնուականների համար: Էս կոմիտետի անդամներն են՝ գեներալ—Լեյտենանտ իշխան Ն. Կ. Բագրատիօն—Մուխրանսկին, գեներալ—Լեյտենանտ իշխան Ր. Ն. Անդրոնիկովը, գեներալ—Մայօր Ե. Գ. Արծրունին, դէյստվիտելնի Ստատսկի Սովետնիկ Ա. Գ. Լխովսկին և կոլեժսկի Ասեսոր Կ. Ե. Շմիդտը:

2.) Քաղաքումը անշարժ կայք ունեցող առուտուրով պարապող անձնական (լիչնի) ազնիւների և պատուաւոր քաղաքացւոց համար: Էս կոմիտետի անդամներն են՝ կոլեժսկի Ասեսոր Ալէքսանդր Թայիրեանցը, Ալէքսանդր Փուղինեանցը, Գաբրիէլ Շադինեանցը և Նիկոլայ Միրիմանեանցը:

3.) Քաղաքումս անշարժ կայք ունեցող քաղաքացւոց համար: Էս կոմիտետի անդամներն են՝ Աբրահամ Բաբանեանցը, Տիմոֆէյ Նասւմենկոն, Յովհան Մաղերը և Պետրոս Չամբարձումեանցը:

4.) Քաղաքումս անշարժ կայք չունեցող, բայց առուտուրով կամ արհեստով պարապողների համար, որոնք որ քաղաքին հարկ են տալիս: Էս կոմիտետի անդամներն են՝ Մակի Մարկոսեանցը, Յովհաննէս Ալիբեգեանցը, Իվան Սորախովը և Յովհաննէս Տէր Նիկողոսեանցը:

Առաջին կարգի մարդիքն էս ցուցակի ձևով պէտք է տան կոմիտետին իրանց մասին տեղեկութիւններ՝

Իրանց ազգը, անունը, հօր անունը, ազգանունը, կոչումը և տարիքը:	Կայքը քաղաքի որ մասումն է, որ կվարտալումը և որ թաղումը:	Ինչքան արդիւնք է բերում և ինչ է գին դրած:	Ինչ առուտուրով է պարապում և ինչ արդիւնք է ստանում էդ առուտուրից:	Ծանօթութիւններ:

Երկրորդ կարգի մարդիքն էս ցուցակի ձևով պէտք է տան կոմիտետին իրանց մասին տեղեկութիւններ՝

Իրանց ազգը, անունը հօրանունը, ազգանունը, կոչումը և տարիքը:	Կայքը քաղաքի որ մասումն է, որ կվարտալումը և որ թաղումը:	Ինչքան արդիւնք է բերում և ինչ է գին դրած:	Ինչ առուտուրով է պարապում և ինչ արդիւնք ունէ էդ առուտուրից:	Ծանօթութիւններ:

Երրորդ կարգի մարդիքն էս ցուցակի ձևով պէտք է տան կոմիտետին իրանց մասին տեղեկութիւններ՝

Իրանց ազգը, անունը, հօր անունը, և տարիքը:	Նրանց կայքը քաղաքի որ մասումն է, որ կվարտալումը և որ թաղումը:	Ինչքան արդիւնք է բերում և ինչ է գին դրած:	Եթէ պարապում է արհեստով կամ առուտուրով պէտք է գրել, թէ ինչ արհեստով է պարապում և թէ ինչ առուտուրով. նմանապէս թէ ինչ արդիւնք է ստանում էդուրից:	Ծանօթութիւններ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Եթէ քաղաքացիքը (մքալաքները և ախալմոսուլները) ունին քաղաքումը անշարժ կայք և առուտուրով կամ արհեստով էլ պարապում են, պէտք է դրանց մասին էդ տեղեկութիւնները նշանակած լինին էս ցուցակի 5-դ բաժանման մէջը.

Չորրորդ կարգի մարդիքն էս ցուցակի ձևով պէտք է տան կոմիտետին իրանց մասին տեղեկութիւններ՝

Իրանց ազգը, անունը հօրանունը, և տարիքը:	Ինչ տեղ է կենում:	Ինչով է պարապում, ինչ տեղ է նրա դուքանը և ինչ արդիւնք է ստանում:	Ինչքան հարկ է տալիս քաղաքին և նրա տան կամ կարասիքը իրա սեփհականն են, թէ չէ:	Ծանօթութիւններ:

Էս տեղեկութիւնները պէտք է ժողոված լինին մինչև էս տարուայ Մայիսի 15-ը, էդուր համար էլ յայտնըվում է քաղաքի բոլոր բնակիչներին, որ շուտով իմացում տան կոմիտետներին իրանց մասին տեղեկութիւնները վերևը նշանակած ցուցակների ձևով.

Առաջին, այսինքն ժառանգական ազնուականների համար սարքած կոմիտետի նախագահ, դէյստվիտելնի Ստատսկի Սովետնիկ Լխովսկին Թիֆլիսի բնակիչներին յայտնում է, որ հասցնեն վերևը յիշած տեղեկութիւնները իրան: Լխովսկին Մե-

Ժեվոյ Պալատումը կ'ընդունէ բոլորին էս գործի համար առաւօտեան 9 սահաթից մինչև կէսօրի 1 սահաթը։

Ով որ կամենում է աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ էս կարգադրութիւնների մասին կարող է կարդալ Մեղու Հայաստանի 10 № մէջը։

Թիֆլիսի փոշտի կառավարութիւնը յայտնում է, որ էս Ապրիլի 1-ից կընդունվին ամեն տեսակ նամակներ ուղարկելու Թիֆլիսից՝

Ռուսաստան չորեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ և կիրակի օրերով մինչև կէսօրը։

Բութայիսի ճանապարհով երեքշաբթի և ուրբաթ օրերով մինչև կէսօրը։

Բորջոմի կողմը Մայիսի 15-ից մինչև Սեպտեմբերի 15 ը երեքշաբթի և ուրբաթ օրերով մինչև կէսօրը. մնացած ժամանակները միայն ուրբաթ օրերով։

Նորին Կայսերական Բարձրութիւն Ռուսաց Կայսեր Ժառանգ Ալէքսանդր Ալէքսանդրովիչը ընդունել է Թիֆլիսի քաղաքացի Յովսէփ Պապովի չինած Ասիական զէնքը՝ շնորհելով նրան մէկ ոսկէ ժամացոյց։

Թիֆլիսումը ապրիլի 1-ին Նորին Կայսերական Բարձրութիւն Միխաէլ Նիկոլաեվիչի ամուսին Օլգա Ֆէոդորովնային արու զաւակ էլաւ և էս պատճառով միևնոյն օրը Սիոնի մայր եկեղեցումը մոլեբին կատարվեցաւ։ Նոր ծնածին անունը Ալէքսանդր դրին։

ՏՈՐԳԵՐ։

Կովկասումը տրանզիտի ճանապարհներ չինելու համար սարգած Կոմիտեսը յայտնում է, որ պէտք է փոդրաթով տվվի Թիֆլիսից մինչև Կրասնի Մոստ չոսսէի չինելը։ Ցանկացողները պէտք է յայտնեն իրանց միտքը Ընդհանուր Գործերի Դեպարտամենտումը (Դեպարտամենտ Օբշչիխ Դել) մինչև Ապրիլի 20։

Կովկասի Ինտենդանտի կառավարութիւնումը նշանակած է Ապրիլի 5-ին Դրագունի պոլկի համար 64,125 փութ խոտ Ցարսկի Կոլոդցի (Թուքուրմիչա) հասցնելու տորգը։

Կովկասի Ինժիների կառավարութիւնումը նշանակած է Ապրիլի 11-ին Պետրովսկ քաղաքումը 40,000 թոփ պահելու համար քարաչէն տուն չինելու տորգը։

Էլի էնտեղ նշանակած է Ապրիլի 25 ին Թիֆլիսումը Բաի ափին 60,000 թոփ պահելու համար քարաչէն տուն չինելու տորգը։

Ապրիլի 26-ին Թիֆլիսումը Հաւլաբարի և Շան դեղի մէջը 7 կաոր դեռին պէտք է ծախվի։ Բոլոր դեռինը 1086 քառակուսի սաժեն է։

Ապրիլի 26-ին Թիֆլիսի երկաթէ ամանները չինելու գործատանը, որ գտնվում է Կուկիումը, Մոնաստիրսկու տանը, կ'ծախվի մօտ 1000 փութ երկաթի կտորներ։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Կովկասի Փոխարքայի Գլխաւոր Կառավարութենի Ֆինանսովի դեպարտամենտը յայտնում է, որ 1865 թուի ապրիլի 23-ից մինչև էս տարուայ Յունվարի 1 ը 9 մարդու վկայականներ է տված Կովկասի կողմերումը սարերից ոսկի հանելու իրաւունքն ունենալու։ Էս 9 մարդուց երկուսը հայ են՝ 1. Ախալցխեցի Անտոն Սաեանեանցը և 2. Աբուլիսեցի Խաչատուր Ադամեանցը։

Կովկասի ձիաների դողը գլխաւոր կոմիտեսը յայտնում է, որ էս տարի Ապրիլի 10 նշանակած է Թիֆլիսի դողը։ Մատակ (այդը) ձիաները պէտք է վազեն 6 վերս, որձ (մադեան) ձիաները 5 վերս։ Զեն կարող վեր առնել պրիզը էն մատակ ձիաները, որոնք 12 բոպէյով ուշ կհասանեն պրիզի սիւնին և որձ ձիաները, որոնք 10 բոպէյով ուշ կհասանեն սիւնին։ Ով որ ուզում է էս դողումը ձի վազեցնել, պէտք է գրել տայ իր ձին Գիներալ Գուբերնատորի կանցելարիյումը առաւօտեան 9 սահաթից մինչև կէս օրից յետոյ 2 սահաթը։

Ռուսաց Շոգենաւերի (պարախոդների) և Առուտուրի Ընկերութենի Թիֆլիսի գործակալը (ագենտը) յայտնում է, որ էս 1866 թուին ընկերութենի շոգենաւները դուրս կերթան՝

Փոթից Օդեսա ամեռը երկու շաբաթը մէկ անգամ, ամառը՝ Մայիսից մինչև Հոկտեմբերը շաբաթը մէկ անգամ։

Փոթից Կ. Պոլիս շաբաթը մէկ անգամ, շաբաթ օրերով։

Օրպիտիցը Ռիոնի շոգենաւները դուրս են գնում Յունվարի 1-ից մինչև Մարտի 15-ը և Սեպտեմբերի 15-ից մինչև Յունվարի 1-ը հինգշաբթի և կիրակի օրերով։ բայց Մարտի 15-ից մինչև Սեպտեմբերի 15-ը չորեքշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերով։

ԹԻՖԼԻՍ։

Ապրիլի 2-1866։

Եկող տարի 1867 թուին Պարիժումը պէտք է լինի համաշխարհական աշխարհահանդէս (выставка)։ Հին ժամանակներումը մարդիքը բոլորովին հասկացողութիւն չունէին էդպիսի հանդէսների մասին։

Առաջին անգամ աշխարհահանդէսն էլաւ Լոնդոնումը 1851 թուին, երկրորդը՝ 1855 թուին Պարիժումը, Ղրիմի պատերազմի վերջերին, երրորդն՝ էլի Լոնդոնումը 1862 թուին և չորրորդը պէտք է լինի 1867 թուին Պարիժումը։

Ի՞նչ կայ էդ աշխարհահանդէսներումը։ Ահագին շինութենի մէջը ժողոված է աշխարհի ամեն կողմերից բոլոր բնական բերքերը և մարդուս ձեռագործները մէկ խօսքով ամեն բան, որիցն օգուտ է քաղում մարդս։ Մէկ մէկ պատմել, թէ ինչեր է լինում էդ աշխարհահանդէսներումը կը նշանակէ մէկ քանի յայտնութիւններ գրել։ Անկարելի է մինչև անգամ առանց տեսնելու ճիշդ ներկայացնել աշխարհահանդէսի թէ շքեղութիւնը և թէ հարստութիւնը։ Ինչ որ մինչև էսօր մարդկութիւնը կարողացել է ստեղծել, շինել ու ձեռք բերել զանազան արհեստների և գիտութիւնների միջոցով, էդ բոլորը մէկ կախարդական ձեռով մարդը ժողովել է մէկ տեղ և անունը դրել է համաշխարհական աշխարհահանդէս։

Ի հարկ է աշխարհի ամեն կողմերիցն ամեն բանի ժողովելը անկարելի է առանց մեծ մեծ ծախսերի և աշխատանքի։ Ինչի՞ համար են անվում էդ ծախսերը, ո՞ւմ համար է շինվում էդ բոլորը։

պնար էդ հանդէսը. չէ թէ թամաշա տեսնելու, այլ սովորելու, ամէն բան նկատելու, քննելու. և էստեղ յետ եկած ժամանակը մեզ էլ և մեր երկրին էլ օգուտ տար: Եւրոպա ճանապարհորդելու պայմանները հիմի էնպէս հեշտացրած են, որ մեծ ծախս չէ հարկաւոր ցանկացողի համար. մեծ ծախս ենք ասում, քանի որ մեր աչքի առաջ համարեա թէ ամեն օր հազարաւոր մանէթներ են դէն ածվել և դէն ածվում անմեղ տեղը անմեղ բաների վրայ: Ա. Ե.

ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ:

Գլխաւորապէս խոլերան առաջ է գալիս կեղտոտութիւններից և ամեն տեսակ ապականութիւններից. էդ ապականութիւնները փտելով ապականում են և օդը և ի հարկէ էդպիսի օդն էլ մնասից աւելի ուրիշ ոչինչ չէ կարող տալ իր ծծողներին. Ապականած է օդը, նշանակում է որ ապականվում է մեր թոքը, մեր բոլոր կազմուածքը,- հիւանդանում ենք. Եթէ խոլերայէլ առաջ չգայ էդ ապականութիւններից, կարծիք չկայ, որ ուրիշ ցաւերի պատճառ կարող են դառնալ մանաւանդ ամառուան շոգերին, երբոր շոգի զօրութենով շուտով փտում ամեն փտող նիւթերը.

Խոլերայի բունը համարված է Հնդկաստանը և Արաբիան, ինչ տեղ որ Ասիացիքը չափից դուրս ապականում են օդը. Օրինակ, հերուայ խոլերան, որ համարեա թէ բոլոր Ասիան, Եւրոպան և Աֆրիկան անց կացաւ, առաջ եկաւ Արաբիայից, ինչ տեղ որ մահմեդականները մորթոտել էին անհամար ոչխարներ Աստուծու համար և էնպէս վէր էին ածել դաշտումը. Ի հարկէ էդ ոչխարները կ'փտէին, կ'ապականէին օդը և կ'առաջացնէին էն սաստիկ խոլերան, որ հերու էր. Եթէ ուրեմն Արաբիայումը չապականէին հերու օդը, չէին մեռնի խոլերայով հազարաւոր մարդիք զանազան երկիրներումը.

Հիմի Հնդկաստանումն էլ, Արաբիայումն էլ աշխատում են օդի ապականող պատճառները հեռացնելու՝ իրանց երկիրը մաքուր պահելու համար: Եւ ամեն երկիր հիմի պարտական է մաքուր պահել իր քաղաքները և գիւղերը, որ իր երկրի օդն ապականելով չապականէ և ուրիշ երկիրների օդը և խոլերայի պէս սաստիկ ցաւեր չառաջացնէ:

Մենք էլ Թիֆլիսեցիքս նմանապէս ի հարկէ չենք կամենալ ինչպէս մեր և նմանապէս բոլոր մարդկութենի թշնամի դառնալ. Չկամենալն էնդուրով կարելի է իմանալ, երբոր մեր քուչէքը մաքուր կ'ունենանք պահած և ոչ թէ հիմիկվայ պէս աղբով, ցխով և ամեն տեսակ հոտած բաներով լիքը. Մանաւանդ համարեա թէ մեր ամեն թաղերումը գտնված աղբանոցներիցն Աստուած ազատէ. էնպէս տեղեր կայ մեր քաղաքումը, որտեղ մէկ րոպէ շունչ քաշելը կ'նշանակէ դեղել մարդուն. Կատարեալ թոյն է էդ հոտած, ապականած օդը.

Քաղաքիս կառավարութիւնը փոդրաթով տված ունէ բոլոր քուչէքը մաքրելու. Բայց որովհետև իրանք բնակիչները հոգս չեն քաշում էս բանի համար, էդ պատճառով էլ միայն մէկ քանի քուչէքն են մաքրվում, մնացածները մնում են էնպէս կեղտոտ և ցխոտ, ինչպէս առաջ.

Հարկաւոր է ուշք դարձնել նմանապէս և մեր ղենարաններին, տաւար մորթելու տեղերին. Ամեն կարգի ընկած երկիրներումը տաւարը մորթվում է քաղաքից 2, 3 վերստ հեռու և էնտեղից միսը սելերով բերվում է քաղաք ծախելու. Բայց մեր քաղաքումը տաւարը մորթվում է խոլ քաղաքի մէջը, նրանց արիւնումն էլ ու թափաններումը պահվում են խողեր. դուք ներկայացրէք ձեզ յետոյ, թէ ինչ կլինի էն տեղերի օդը. Մենք մեր յօժար կամքով ապականում ենք օդը, էլ ուրեմն անմեղ չգանգատվինք Աստուծու վրայ, որնա մեզ խոլերայով է պատժում. Մենք ենք էդպէս բաներով խոլերային ձեռն ուտը տալիս:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիվերպուլ Մարտի 6.

Մէկ շաբաթվայ մէջը ծախվեցաւ 91290 հակը բամբակ. Բամբակ առնելու ցանկացողներ խիստ շատ են: Բանկը պակասցրեց իր շահը մինչև 6%.

Օդեսա Փետրվարի 25.

Կուրսը Մարսելի վրայ — 322½ սանտիմ:
Պարիժի վրայ — 322 սանտիմ:

Պետերբուրգ Մարտի 11

Կուրսերը

Լոնդոնի վրայ 3 ամիս ժամանակով — — 30¼ պենս.
Պարիժի վրայ — —316½ սանտիմ:

5% Լատարէրով առաջին փոխառութենի տոմսակները ծախվում են 108 մ.—108¼ մ.
5% Լատարէյով երկրորդ փոխառութենի տոմսակները ծախվում են բանկումը — — 105½ մ.
Ոսկին ծախվում է 6 մ. 50 կ.—6 մ. 53կ:

Կ. Պօլիս Մարտի 12.

Մարտի 5-ից մինչև էսօր ծախվեցաւ մօտ 660 հակը Երևանու բամբակ, հոխան ($3\frac{1}{8}$ Ռսի Ֆունտ) 16 ղուրուշով (ղուրուշը 7 կոպ. է հիմի):

Թիֆլիս Ապրիլի 2.

Երևանու բամբակը — 12 մ. 70 կ.
Բուրդը — — —
Եալայի լեղակը 6 ամիս ժամ. 160 մ.
Ինգլիզու շաքարը 9. մ. 80 կոպ.
Ռսինը — — 10 մ. 10 կոպ.
Արծաթը 72 պրօբի—60 մ.
84 պրօբի—280 մ.
Ոսկին — — 6 ման. 62 կոպ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Ապրիլի 7-ին, հինգշաբթի օրը կ'լինի Թիֆլիսումը Հայերէն թէատր. Կ'խաղացվին Պ. Սունդուկեանցի «Խաթաբալա» անունով կոմեդիան և Պ. Տէր Գրիգորեանցի «Էս էլ քեզ Մօցիքըլութին» անունով Ֆարս-վոդեվիլը. Գործողութիւնների մէջը Խոսրովցի Բոլղենի աշխին ու ազէն կ'խաղան «Մազուրկա» և «китайскiй танецъ»

Շտապումենք հրաւիրել մեր կարդացողներին Մելիքովի և ընկ. տպարանից դուրս եկած դրքից 1865 թւի № 10, 11 և 12 կոնկի և ներսից «Հայկական աշխարհի» (մետամորֆոզա.- որովհետև գարնան պատճառով ամեն տարին կենդանիները փոխումեն իրանց արտաքին տեսքը:) 484, 485, 486, 487, և 489 երեսների վրայ տպած մեր գաղէթի վրայ նկատողութիւնները կարդալու. Հարկաւոր ենք համարում ասել էդ ժուրնալի ծանօթներին, որ «Հայկական աշխարհ» օրագրի օրագրող—խմբագրող—հրատարակողն է Մոսկվայի Կայսերական Համալսարանի պատմաբանական գիտութիւնների կանդիդատ Ստեփաննոս Ստեփանէ. (Այսինքն Ստեփանեանց —էլի մետամորֆոզա, միայն սրանից երկու տարի առաջ պատահած):

Խմբագրութենի կողմից:

Մեր գաղեթի 3 նումերի 10 երեսին, առաջին էջումը տպած է 2,135,907 Ֆրանկ, բայց պէտք է կարդալ 2,135,000,907 Ֆրանկ և 12 երեսին երրորդ էջի 27 տողումը 10 ու կէս ման. տեղ պէտք է կարդալ 105 ու կէս ման:

дозволено цензурою апрѣля 2 го 1866 г.
Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ:
Խմբագրող եւ Հրատարակիչ Գ. Տէր Աղէքսանդրեանց: